



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

25 դեկտեմբերի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Լալա Ասլիկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լալա Ասլիկյանը 2015թ. դեկտեմբերի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի, 132-րդ հոդվածի 4-րդ մասի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) հարգելի համարելու՝ դատարանների պարտավորությունը»:

Մույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթների իրավակարգավորումը հանգում է հետևյալին՝ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը «բաց թողնելու» դեպքում, այն հարգելի համարելու համար, վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի վերաքննիչ դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով:

2. Լալա Ասլիկյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ այդ առնչությամբ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 31-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Լալա Ասլիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Լալա Ապիկյանին ազատել պետական տուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝

25 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/1-31